

## Տ. ՇԱՀԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Արփյոմ)

Ծնվել է 1982 թ. հոկտեմբերի 1-ին Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

1989-1999 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2003-2005 թթ. ուսանել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2005 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Անդեմ նախադասությունները չորս Ավետարաններում (գրաբար բնագիր)» թեմայով:

2004 թ. դեկտեմբեր 26-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբեր 25-ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տաթոն եպիսկոպոս Ճերեճյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2005 թ. հուլիսից պաշտոնավարում է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում որպես Նորին Սրբության գավազանակիր-գործավար: